

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Ծախսերի հաշվառման խմբի մասնագետ

Աշխատանքի վայր

ք. Երևան

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման ծառայության գործունեությանը վերաբերող հաշվապահական հաշվառման իրականացում՝ պահպանելով օրենսդրության պահանջներին համապատասխան հարկային հաշվառման վարման պահանջները;
- Ավտոտրանսպորտային միջոցների, դրանց բաղկացուցիչների կամ առանձին դետալների ընթացիկ նորոգումների գծով հաշվարկային փաստաթղթերի (հարկային հաշիվների և հաշիվ-վավերագրերի) նախապատրաստում, փաստաթղթերի ամբողջականության ստուգում և ուսումնասիրություն (հարկային օրենսդրության պահանջներին համապատասխանությունը);
- Ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման ծառայության միջոցներով կատարված աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերի, հիմքերի և ակտերի նախապատրաստում;
- Կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների նախապատրաստում;
- Անհրաժեշտության դեպքում համակարգչային ծրագրային փաթեթների կիրառմամբ հաշվառման վարում կամ տեղեկատվության ամփոփում:

Պահանջներ

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտական և/կամ ֆինանսական ոլորտներում;
- Առնվազն 1 տարվա համապատասխան աշխատանքային փորձ;
- Համակարգչային գիտելիքներ (MS Word, Excel, Հայկական Ծրագրեր);
- Տեխնիկական հաշվարկների իրականացման մեթոդների և տնտեսական արդյունավետության գնահատման իմացություն;
- Կարգապահության և բարձր պատասխանատվության զգացում;
- Թիմային աշխատանք

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV am.water.hr@veolia.com էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Ծախսերի հաշվառման խմբի մասնագետ**: Հարցազրույցին մասնակցելու համար կհրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: